ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0023, ք. Երևան, Արշակունյաց պող. 23, հեռ.՝ (010) 44-11-36, ֆաքս՝ (010) 58-15-74, էլ. կայք՝ justexpert.am

N Հ-0499-գ

«29» 08 2018 թ.

«ՅԱՆԻՆԱ» ՍՊԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Կ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ
(ք.Երևան, Լվովյան փ. 61/2 շենք, 23 բն.)
ՀՎՀՀ 00838865

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Յանինա» ՍՊԸ-ի միջև 20.06.2018 թվականին կնքվել է տեխնիկական հսկողության ծառայությունների գնման թիվ ՀՀՓԿ-ՄԱԾՁԲ-11/18 պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որով Կատարողը ստանձնում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորություն Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցին համապատասխան:

Սույն թվականի օգոստոսի 24-ից Կատարողը չի կատարում Արշակունյաց պող. 23 հասցեում շինարարական աշխատանքների նկատմամբ տխնիկական հսկողության ծառայությունները և ՊՈԱԿ-ին ուղղված գրությամբ «Յանինա» ՍՊԸ-ն փաստացի հրաժարվում է կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ պատճառաբանելով տնօրենի վատառողջ լինելը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը 29.08.2018 թվականից միակողմանի լուծում է «Յանինա» ՍՊԸ-ի հետ 20.06.2018 թվականին կնքված թիվ ՀՀՓԿ-ՄԱԾՁԲ-11/18 Պայմանագիրը:

Հարգանքով՝
Տնօրեն **Ա. Սուչյան**

Կատարող՝ իրավաբան Ջ Թամազյան
Հեռ.՝ (010) 44 11 36 /17/